ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 մարտի 2018 թվականի N 214 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-Ի N 620 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 1998 թվականի նոյեմբերի 6-ի «Պետական կառավարման մարմինների աշխատողների առավելագույն թվաքանակ և ղեկավարների տեղակալների թվաքանակ սահմանելու մասին» N 620 որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 11-րդ կետում՝

ա. «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմ» պարբերությունում «420» թիվը փոխարինել «478» թվով,

բ. «կառուցվածքային ստորաբաժանումներ» պարբերությունում «147» թիվը փոխարինել «153» թվով,

գ. «կենսառեսուրսների կառավարման գործակալություն» պարբերությունում «25» թիվը փոխարինել «22» թվով,

դ. «Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին 195 3 -» պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«Նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին՝

Անտառային պետական կոմիտեի աշխատակազմ՝ 55 3 1

այդ թվում՝

կառուցվածքային ստորաբաժանումներ 55 3 1».

2) 13-րդ կետում՝

ա. «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն» պարբերությունում «485» թիվը փոխարինել «482» թվով,

բ. «նախարարության աշխատակազմ» պարբերությունում «145» թիվը փոխարինել «142» թվով,

գ. «կառուցվածքային ստորաբաժանումներ» պարբերությունում «129» թիվը փոխարինել «126» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2018 թ. մարտի 2
Երևան